ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 45

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

11-14ը մայիսի 2020թ.

Առցանց հարցման միջոցով կազմակերպված նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 32-ը:

Նիստն անց է կացվել Google հարթակում, գիտական խորհրդի նախագահն էր Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարը՝ Մ. Ս. Աթոյանը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին ուղարկվել է https://docs.google.com/forms -ով կազմված ձևաչափեր, որոնք հնարավորություն են ընձեռել գիտական խորհրդի անդամներին կարդալ տվյալ հարցի մասին հաղորդումը, ներկայացնել առաջարկություններ և քվեարկել առցանց:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության հարցի քննարկում: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյան/**
2. ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյան/**
3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին: **/Զեկուցող՝ ՈՒՄՎՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյան/**
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի բակալավրական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ

առցանց ատեստավորման ընթացակարգի հաստատում: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյան/**

5. ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի կանոնադրության հաստատում: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյան/**
6. ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶ բաժնի կանոնադրության հաստատում: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյան/**
7. ԵՊՀ ԻՄ-ը ՈՒԳԸ նախագահի պաշտոնում Մ. Ասիլյանին հաստատելու մասին: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյան/**
8. ԵՊՀ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., դոցենտ Վաչագան Ավագյանի «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով գիտական թեմայի նախագիծը գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար երաշխավորելու մասին: **/Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Ավագյան/**

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 45/1

- Հաստատել նիստի օրակարգը:

Առցանց քվեարկության արդյունքներին կարող եք տեսնել հետևյալ հղումով՝ Առցացանց քվեարկության արդյունքները:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության հարցի քննարկում» հարցի

վերաբերյալ **ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Ց. Դավթյանի** զեկույցը ներկայացվում է ստորև.

«Այս պահին առկա ուսուցմամբ ԵՊՀ ԻՄ-ն ունի լիցենզիա միայն Կիրառական արվեստ մասնագիտությամբ՝ Դեկորատիվ կիրառական արվեստ կրթական ծրագրով: ՈՒՄՎ-ի և Կիրառական արվեստի ֆակուլտետի կողմից կատարված նախանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2020-2021 ուսումնական տարում այս մասնագիտությամբ ընդունելություն կազմակերպելու դեպքում հավանականությունը շատ փոքր է, որ Մասնաճյուղը կունենա անհրաժեշտ քանակով դիմորդներ: ՈՒՄՎ-ն առաջարկում է այս ուսումնական տարում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն չհայտարարել»:

Առցանց քվեարկությամբ՝ 27 կողմ, 1 դեմ, 4 ձեռնպահ, ***որոշվել է.***

ՈՐՈՇՈՒՄ 45/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ-ում 2020-2021 ուսումնական տարում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելություն չկատարել:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ ՝«ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում» հարցի հետ կապված ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը հետևյալն էր.

« ԵՊՀ ԻՄ-ի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարածաշրջանում կա անհրաժեշտություն կազմակերպելու կրթություն մանկավարժի որակավորում շնորհող ծրագրով: ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում էր ընդունել սահմանված ընթացակարգով ձեռք է բերել համապատասխան լիցենզիա «Դասավանդման մեթոդիկա և մանկավարժություն» կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ մագիստրոսական ուսուցում կազմակերպելու համար, որի լիցենզիան արդեն առկա է:

Հույս ունենք, որ 2020-2021 ուսումնական տարում այս մասնագիտությամբ ընդունելություն կազմակերպելու դեպքում Մասնաճյուղը կունենա անհրաժեշտ քանակով դիմորդներ:

Առաջարկվում է հաստատել ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգը համաձայն հավելված 1-ի»:

Մասնակիցների առաջարկները՝

Ա. Մարգարյան- «Իրոք դրա կարիքը առկա է»:

Վ. Ավագյան - «Քանի որ նշված կրթական ծրագրով մագիստրատուրա կարող են ընդունվել անկախ նրանից, թե ինչ կրթական ծրագրի շրջանավարտ են, ուստի առաջարկում եմ կարգում առանձնացնել կետ, թե ընդունվելու համար, որ առարկայից է լինելու հարցազրույցը և ինչպես է գնահատվելու»:

Առցանց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 45/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի

կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգը համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u> **՝** « Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի հետ կապված **Լ. Բեգինյանի** հաղորդումը այսպիսին էր.

‹‹2019-2020 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանի համաձայն մասնաճյուղի ուսումնական գործընթացն ընդգրկել է 28 պրակտիկաներ, որոնցից՝

- առկա ուսուցում - ուսումնական՝ 3 պրակտիկա, արտադրական (մանկավարժական)՝ 3 պրակտիկա, արտադրական՝ 9 պրակտիկա,

- հեռակա ուսուցում - ուսումնական՝ 3 պրակտիկա, արտադրական (մանկավարժական)՝ 5 պրակտիկա, արտադրական՝ 5 պրակտիկա,:

2019-2020 ուստարվա ընթացքում մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է «Ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասին» 35 պայմանագրեր, որոնցից երեքը ձեռք են բերվել ուստարվա ընթացքում: Մանկավարժական պրակտիկաների համար պայմանագրեր են կնքվել Իջևանի Ս.Սարգսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցի և Իջևանի Մ.Մարտիրոսյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցի տնօրենների հետ, արտադրական պրակտիկայի համար՝«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերության հետ:

Պրակտիկաները կազմակերպվել են ըստ ժամանակացույցի՝ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան:

Առաջին կիսամյակի ընթացքում ուսումնական պրակտիկան կազմակերպվել է հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսերի ուսանողների համար: Ծրագրով նախատեսված աշխատանքների մի մասն իրականացվել է մասնաճյուղում, մի մասը երթուղային եղանակով (թանգարաններ, հուշարձաններ): Պրակտիկան անցել են 30 ուսանողներ: Պրակտիկայի ավարտական փուլն անցկացվել է մասնաճյուղում, կազմակերպվել են քննարկումներ, ներկայացվել՝ հաշվետվությունները: Ուսումնական պրակտիկայից պարտքի վերահանձնում կատարել է մեկ ուսանող:

Արտադրական (մանկավարժական) պրակտիկաները կազմակերպվել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի, ինչպես նաև Հոգեբանություն 5-րդ կուրսի ուսանողների համար (ընդհանուր 151 ուսանող)՝ մասնագիտական ամբիոնի կողմից հաստատված ծրագրային պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ուսանողների տեսական պատրաստվածությունն ու գործնական կարողությունները: Մանկավարժի մասնագիտական գործունեության մեջ ուսանողներն ընդգրկվել են պասիվ և ակտիվ շրջափուլերով՝ ապահովելով գործնական գիտելիքների աստիճանական յուրացման շարունակականություն ու հետևողականությունը: Դպրոցներն աջակցել են մասնաճյուղի ուսանողներին, մանկավարժական կարողություններ ձևավորելու, հմտություններ ձեռք բերելու գործում: Պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ աշխատել են ինչպես դպրոցների մեթոդիստ ղեկավարները, այնպես էլ մասնագիտական ամբիոններից նշանակված ղեկավարները, մանկավարժներն ու հոգեբանները: Ընթացիկ խնդիրներին իրազեկ լինելու և հետագայում պրակտիկաների կազմակերպման գործընթացը բարելավելու համար Մինչհամալսարանական

կրթության և պրակտիկայի կազմակերպման բաժնի կողմից պարբերաբար իրականացվել են վերահսկողական աշխատանքներ, դպրոց կատարվող այցելությունների, բուհ-դպրոց քննարկումների, ուսանողների հետ հանդիպումների կազմակերպման եղանակներով: Պրակտիկայի վայրում ուսանողի կատարված աշխատանքներն արտահայտվել են օրագրային (կամ փաթեթային) գրառումներում, վավերացվել դպրոցի մեթոդիստ ղեկավարի և տնօրենի ստորագրությամբ, ինչպես նաև դպրոցի տնօրենի կողմից ուսանող պրակտիկանտի վերաբերյալ տրվող բնութագրով:

Արտադրական պրակտիկաները կազմակերպվել են «Հայոց լեզու և գրականություն» 3-րդ կուրսի, «Հոգեբանություն» 4-րդ կուրսի և «Տնտեսագիտություն» 5-րդ կուրսի ուսանողների համար (ընդհանուր 81 ուսանող): «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պրակտիկան իրականացվել է դաշտային աշխատանքների կատարմամբ: «Հոգեբանություն» 4-րդ կուրսի և «Տնտեսագիտություն» 5-րդ կուրսի ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացրել ինչպես մասնաճյուղի կողմից առաջարկվող հաստատություններում, այնպես էլ իրենց կողմից ընտրված հաստատություններում, ընդունող կողմի հետ ունենալով համապատասխան պայմանվորվածություն: Արդյունքում պրակտիկանները իրականացվել են լայն աշխարհագրությամբ (Տավուշի մարզ, Գեղարքունիքի մարզ, Արագածոտնի մարզ, ք.Երևան և այլն): Գրություններն ուղարկվել են և՛ գրավոր (առձեռն), և՛ էլեկտրոնային տարբերակ-ներով:

Երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվել են «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» (02.03-13.03.2020) և «Տնտեսագիտություն» (10.02-06.03.2020) ավարտական կուրսերի արտադրական պրակտիկաները (ընդհանուր 42 ուսանող): «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի ուսանողների մի մասը պրակտիկան իրականացրել են ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի

ուսումնահետազոտական կենտրոնում՝ ելնելով ավարտական աշխատանքների թեմատիկ առանձնահատկություններից:

ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ի որոշման համաձայն երկրում ստեղծված արտակարգ իրադրության պայմաններում մասնաճյուղում կազմակերպվող պրակտիկաները և հաշվետվությունները իրականացվում են առցանց Zoom հարթակի միջոցով: Ընթացքի մեջ են համարվում առկա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 3-րդ կուրսի, «Զբոսաշրջություն» 1-ին կուրսի, «Զբոսաշրջություն» առկա և հեռակա 2-րդ կուրսերի, «Պատմություն» 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկաները (ընդհանուր 150 ուսանող): »

Առցանց քվեարկությամբ՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 45/4

- Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u> ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի բակալավրական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ առցանց ատեստավորման ընթացակարգի հաստատում» հարցի հետ կապված **ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի** հաղորդումը հետևյալն էր.

«Բոլորիս հայտնի պատճառներով ԵՊՀ ԻՄ-ի բակալավրական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ առցանց ատեստավորման համար անհրաժեշտ է հաստատել ընթացակարգ: Այդ կանոններին կարող եք ծանոթանալ հավելված 2 -ում՝»:

Մասնակիցների առաջարկները՝

Դավիթ Թինոյան - «Կարծես թե նման պայմաններում նորմալ է»:

Հրանտ Ղարագյոզյան - «Ոչ բոլոր ուսանողներն ունեն համակարգիչ կամ 3G ինտերնետ, հիմնականում H+ է ինտերնետ կապի ծածկույթը: Առաջարկում եմ՝ այն ուսանողները, ովքեր չունեն համակարգիչ, իրենց slide show-ները միացվեն ուրիշի համակարգչով»:

Ալեքսան Մարգարյան - «Շատ դժվար կլինի ապահովել նշված պահանջները»:

Արեն Ավետիսյան - «Տեխնիկական պահանջները դրված են շատ խիստ: Բացի այդ խնդրում եմ պարզաբանել ինչ չափորոշիչով ենք վերցրել «որակյալ» -ը ինտերնետ կապի համար որպես չափման միավոր և ինչ կարող է անել ուսանողը իր վրա դրված այդ «պարտավորությունը» բավարարելու համար, չէ որ մենք բոլորս հասկանում ենք, որ ինտերնետ կապի «որակյալ» լինելը կախված է ոչ թե ուսանողից այլ մատակարարներից: Ցանկանում եմ նշել նաև, որ մարզի տարածքում գործում է բավականին թույլ ծածկույթ: Առաջարկում եմ պահանջները դնել համալսարանի, մարզի ռեսուրսներին համապատասխան և այնպիսին, որ ուսանողը (կամ ընդհանրապես մարդը) կարողանա որոշակի քայլերով համապատասխանեցնել իր պայմանները տվյալ պահանջներին»:

Շիրակ Գասպարյան - «Zoom ծրագրով անարդյունավետ է ներկայացնել ավարտական աշխատանքը, ուսանողը չի կարող 100% ներկայանալ, տարբեր խնդիրների պատճառով կապի, սարքի բացակայության և այլնի պատճառով: Իսկ բանավոր խոսքը կկաղի, և կիջնի ուսանողի գնահատականը, ինչպես գիտենք ավարտական աշխատանքից է կախված ուսանողի ապագան: Թույլ տվեք ուսանողը իրեն դրսևորի ամբողջությամբ, և կարող եք բոլոր սանիտարահիգենիկ միջոցները օգտագործել և օֆլայն անցկացնել: Եթե իհարկե ուսանողը ձեր համար կարևոր է» :

Տիգրանուհի Թիրաբյան - «ՈՒսանողների մի մասը չի կարող ապահովել տեխնիկական պահանջները, իսկ 7.3 կետով նշված ինտերնետային կապի որակը ընդհանրապես կախված չէ ուսանողից»:

Առցանց քվեարկությամբ՝ 24 կողմ, 5 դեմ, 3 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 45/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի բակալավրական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը համաձայն հավելված 2-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

<u>Օրակարգի հինգերորդ</u> **՝** «ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի կանոնադրության հաստատում»: հարցի հետ կապված **Մ. Աթոյանի հաղորդումը** հետևյալն էր.

«ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ հումանիտար գիտությունների ֆակուլտետում տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն՝ լուծարվել են Անգլերեն լեզվի և գրականության, Ֆրանսերեն լեզվի և գրականության ու Ռուսաց լեզվի և գրականության սեկցիան, որոնց հիման վրա ձևավորվել է մեկ Օտար լեզուների ամբիոն։

Օտար լեզուների ամբիոնի կանոնադրությունը կազմվել է հիմք ընդունելով Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը։ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի կանոնադրությունը կարող եք տեսնել հավելված 3-ում»։

Առցանց քվեարկությամբ, միաձայն՝ 31 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 45/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի կանոնադրությունը համաձայն հավելված 3-ի։
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի հունվարի 27-ին կայացած թիվ 21 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը։
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի հունվարի 27-ին կայացած թիվ 21 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը։
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Օրակարգի վեցերորդ՝ «ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶ բաժնի կանոնադրության հաստատում » հարցի հետ կապված **ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանի** հաղորդումը հետևյալն էր.

«ԵՊՀ ԻՄ-ում կատարված կառուցվածքային փոփոխությունների պատճառով փոփոխություններ են կատարվել նաև որոշ բաժինների գործառույթներում, այդ թվում նաև ՏՀՍԶ բաժնի գործառույթներում։ մասնավորապես ավելացել է ԵՊՀ ԻՄ-ի կայքէջի ծրագրային ապահովումը։

Նշենք, որ ՏՀՍԶ բաժնը միչև այժմ առաջնորդվել է 2013թ. մարտի 30-ին ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում հաստատված ԵՊՀ ԻՄ Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժնի կանոնակարգով։

ՏՀՍԶԲ-ի կանոնադրությունը կարող եք տեսնել հավելված 4-ում»:

Մասնակիցների առաջարկները՝

Աննա Հովակիմյան - «ՏՀԱԶ բաժնի կազմում նախատեսել ծրագրավորողների խումբ, որը բացի ԵՊՀ ԻՄ-ի կայքէջի ծրագրային ապահովումը կազմակերպելուց իրավասու կլինի իրականացնելու մասնաճյուղում ընթացող որոշ գործընթացների ավտոմատացումը և ծրագրային աջակցումը»:

Առցանց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ, **որոշվել է.**

Որոշում 45/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶԲ-ի կանոնադրությունը համաձայն հավելված 4-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2013թ.-ի մարտի 30-ին կայացած թիվ 2 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶ բաժնի կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի յոթերորդ</u>՝ «ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահի պաշտոնում Մ. Ասիլյանին հաստատելու մասին» հարցի հետ կապված **ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանի** հաղորդումը հետևյալն էր.

«Ավարտական կուրսում սովորելու պատճառով Հ. Ղարագյոզյանը վայր է դրել ՈՒԳԸ նախագահի իր լիազորությունները: ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ կազմակերպել է ՈՒԳԸ նախագահի նոր ընտրություններ 26. 02. 2020 թ. -ին: Նախագահի

թեկնածու է առաջադրվել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Մ. Ասիլյանը։ Վերջինս ներկայացրել է նախընտրական ծրագիր, որից հետո կազմակերպվել է փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքում որոշվել է՝ հիմք ընդունելով ընտրության արդյունքները (կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ ընտրել Մ. Ասիլյանին։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ ընտրության արդյունքները ներկայացրել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդ՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Մ. Ասիլյանին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահի պաշտոնում հաստատելու համար։ Նշեմ, որ համաձայն ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ կանոնադրության 3. 14 կետի՝ Ընկերության նախագահին ընտրում է ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ գիտական խորհուրդը և ներկայացնում ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը: Ընկերության փոխնախագահին և քարտուղարին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության նախագահը»։

Առցանց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, **որոշվել է.**

Որոշում 45/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հիմք ընդունել ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ գիտական խորհրդի 26.02.2020 թ.-ին կայացած 2-րդ նիստի որոշումը և Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Մ.Ասիլյանին հաստատել ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահի պաշտոնում։

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի ութերորդ</u>՝«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վաչագան Ավագյանի ղեկավարությամբ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով գիտական թեմայի նախագծի մասին հաղորդումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի կողմից կազմակերպած Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ գիտական թեմաների հայտերի մրցույթին ներկայացնելու երաշխավորման մասին» հարցի վերաբերյալ **Վ. Ավագյանի** հաղորդումը հետևյալն էր.

«ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար մեծարգո՛ Ա. Մակարյան, գիտական խորհրդի հարգելի՛ քարտուղար Մ. Աթոյան, գիտական խորհրդի հարգարժա՛ն անդամներ, գիտական խորհրդի միջնորդության ենք դիմում՝ խնդրելով որոշմամբ հաստատել ՀՀ Գիտության կոմիտեի փորձաքննությանը ներկայացվող «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով մեր կողմից մշակված գիտական թեմայի նախագիծը, որպեսզի իրավունք ունենանք մասնակցելու գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին:

Թեմայի ուսումնասիրման սահմաններում նախատեսում ենք անդրադառնալ XIX դարի արևմտաեվրոպացի նշանավոր հայագետներին, հանգամանորեն ուսումնասիրել նրանց՝ մեր թեմայի շրջանակում հետաքրքրություն ներկայացնող գիտական աշխատությունները: Նախատեսում ենք նաև անդրադառնալ Եվրոպայում հայագիտական

հսկայական աշխատանք կատարած Մխիթարյանների, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի հայ գաղթօջախների որոշ ներկայացուցիչների հայագիտական գործունեությանը:

Հետազոտության ընթացքում նախատեսում ենք ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կայքէջում ավելացնել «Հայագիտությունը Եվրոպայում» էլեկտրոնային շտեմարան-գրադարան բաժին և այնտեղ տեղադրել նախագծով կատարված հետազոտության արդյունքները դրանք հետագայում լրացնելու պայմանով: Նախատեսում ենք «գրադարանի» նյութերը հետաքրքրասեր ընթերցողին ներկայացնել մատենաշարի ձևով նախ էլեկտրոնային, իսկ բարեհաջող գործընթացի պարագայում (դրանք հատվածաբար կամ ամբողջությամբ տպագրելու հնարավորության դեպքում)՝ նաև առանձին գրքերի (գրքույկների) հրատարակման տարբերակով: Հեռանկարում նպատակադրված ենք ինչպես մեր հետազոտությունների արդյունքները, այնպես էլ «Հայագիտությունը Եվրոպայում» էլեկտրոնային շտեմարան-գրադարանի բոլոր նյութերը ներկայացնել երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն: Հնարավորության դեպքում մասնաճյուղը կարող է «գրադարանի» նյութերի հիման վրա կազմակերպել «Եվրոպական հայագետներ» մատենաշարի հրատարակություն: Այդ մատենաշարը կկրի շարունակական բնույթ և կընդգրկի ինչպես հայագետների կենսագրականները, նրանց աշխատությունների նկարագիրը, դրանց վերլուծությունները, այնպես էլ առանձին հատվածներ դրանցից (կամ ամբողջ աշխատությունը):

Բացի այդ՝ նախատեսվում է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպել հայագիտության հիմնախնդիրներին նվիրված միջազգային գիտաժողով:

Գիտական խմբի կազմը. ղեկավար՝ բան. գիտ. թեկն., դոցենտ Վաչագան Ավագյան, անդամներ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բան. գիտ. թեկն. Անահիտ Բեքարյան, ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Մանե

Աղբալյան, հետազոտող խմբի օտարերկրյա գործընկեր՝ Վարշավայի համալսարանի պրոֆեսոր Մարիա Կալինովսկա:»

Առցանց քվեարկությամբ՝ 32 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 45/9

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վաչագան Ավագյանի ղեկավարությամբ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ» խորագրով գիտական թեմայի նախագիծը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի կողմից կազմակերպած Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ գիտական թեմաների հայտերի մրցույթին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ